



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ**

N 21-08  
22.02.2021

**ՀՀ արդարադատության նախարար՝  
պարոն Ռուստամ Բադասյանին**

**ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հարգելի պարոն Բադասյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ հանդիպել են ցմահ ազատազրկման դատապարտված դատապարտյալ [redacted] [redacted] [redacted]: Խմբի անդամներին վերջինս հայտնել է, որ իր խցում կատարվել է խուզարկություն և ինքն ի նշան բողոքի գրալ է կուլ տվել և որովայնի շրջանում կատարել է ինքնավնասում: [redacted] պնդմամբ ինքնավնասում կատարելուց հետո բժիշկների կողմից չի զննվել և որևէ բժշկական օգնություն չի տրամադրվել: [redacted] նաև տեղեկացրել է, որ ունի առողջական խնդիրներ կապված լյարդի և աղեստամոքսային համակարգի հետ, սակայն որևէ բուժօգնություն չի ստանում: Ցավերի սրացման և ինքնազգացողությունը վատանալու դեպքում բժիշկն իրեն չի զննում և չեն տրամադրում անհրաժեշտ դեղահաբեր:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք քննարկել [redacted] անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու հարցը:

**Հարգանքով՝**

**Խմբի նախագահ** 

**Արայիկ Զայյան**